ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 778-Ա

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 675-Ն որոշման հավելվածի 6-րդ կետը՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում 2024 թվականի կրթական մրցանակներ շնորհել լավագույն ուսանողներին և լավագույն սովորողներին՝ ըստ անվանացանկի, կրթական հաստատությունների, անվանակարգերի և պարգևատրման չափի՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ